

Յայտնի էր թե իշխանուհին խելացի եւ սրամիտ կին էր, ուներ թե դատաստանական, թե մատակարարութեան գործերու համար փորձառու մարդիկ, որոց խորհրդով եւ գործակցութեամբ կը վարուէր եւ ամենքը գոհ կ'ընէր, բայց, որ ամենէն կարելորն էր, իւր գանձապետն էր՝ տան վերակացու՝ Յուսիկ Արտամետցի, որ բացառութիւն կրնար համարուիլ իւր պաշտօնակցաց մէջ:

Այս Յուսիկ իւր ազահութեան համար ոչ ոք բարեկամ չունէր Ոստանին եւ բոլոր Ռշտունեաց մէջ, եւ իւր առաջին հակառակորդ իշխանուհին ինքն էր, վասնզի ամէն օր հետը վիճելու եւ գանգատելու նիւթ ուներ: Իսկ Յուսիկ ինքն համբերութեան, քաղցրութեան, հեգնութեան եւ հաւատարմութեան զարմանալի խառնուրդ մ'էր. եւ բարկութեամբ խօսողին ինքն համբերութեամբ կը պատասխանէր անվրդով իւր առաջադրութեան մէջ: Այնպէս որ իրեն հետ գործ ունեցողը կը յուսահատէր եւ հնարք չէր գտներ զինքն որսալու: Ուստի շարունակ գանգատ եւ բողոք անպակաս էին իր անձին դէմ: Ման աւանդ զինուորական դասը միշտ դժգոհ իրմէ կը գանգատէին, երբեմն կը նախատէին եւ երբեմն կը սպառնային: Միայն մէկ մարդ կար, — եւ այն Թեոդորոս ինքն չէր, — որուն կամքը շուտ եւ անդանդաղ կը կատարէր Յուսիկ, եւ ինչ գումար դրամոյ որ խնդրէր, վայրկեանին կ'ուղարկէր կամ կը վճարէր, այդ մարդը Ատոմ Շահունին էր: Վասնզի ծեր զօրավարը օր մը յայտնի ըսէր էր Ռշտունեան իշխանին եւ իշխանուհուին թէ՝ «Լաւ գիտե՛նա՛յ այդ Յուսիկ, որ ես կատականաց գիտեմ համբերել, բայց օր մը չի կարծած վայրկեանին կախել կ'ուտամ զինք առանց երկար արարողութեանց»: Երբ իմացուցին գանձապետին այս սպառնալիքը, քիչ մը մտածեց, ետքը քօն տակն կամաց մը ժպտեց, յետոյ գնաց ծեր զօրավարին հետ խօսեցաւ եւ համաձայնեցաւ: Երբ իրեն կ'առարկէին թէ Ատոմին հրամանները շուտ կը կատարէր եւ անդանդաղ՝ կը պատասխանէր. «Ռշտունեաց գաւառին մէջ այդ ծերուն պէս անշահասէր մարդ մը ինձ ցցուցէք, ես պատրաստ եմ Զայոց զօրավարին բոլոր գանձն իրեն յանձնելու»: Եւ վերջը ծիծաղելով կ'ըսէր՝ «Ոսկին ի՞նչ պիտի ընէ այդ ծերը, ինք արդէն ոսկի է, ինձ եթէ չէք հաւատար՝ երեսը նայեցէք», Ատոմի դեղնած երեսին ակնարկելով:

Իսկ երբ Թեոդորոս գանգատներէ ձանձրացած Յուսիկն իր պաշտօնէն հանել կը մտածէր, Սեթայ միշտ կը հակառակէր, վասնզի լաւ խելահաս եղած էր թէ այդ ծեր Յուսիկ ամենահաւատարիմ մարդ էր եւ գերագոյն մատակարար: Իւր ազահութիւնը իր անձին հարստութեան համար չէր այլ ոսկին կը սիրէր իր բնութեան համար, գանձը բանալ, իւր տետրակներուն հաշիւը քննել, տեսնել եւ միշտ եկամուտը ծախքէն աւելի գտնել, հոն էր իւր բոլոր զուարճութիւնն ու գոռոզութիւնը եւ այն ատեն ինքնիրեն կամաց եւ անլսելի ձայնով կ'ըսէր. «Թող